



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԶՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԿՈՄԻՏԵԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

**ԵՐԵՎԱՆ - 2015**

## **ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային  
տնտեսության պետական կոմիտեի կողմից 2014 թվականին կատարված հիմնական  
աշխատանքների վերաբերյալ**

2014 թվականի ընթացքում ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատանքային գործունեության հիմքում ընկած էին ՀՀ ջրային օրենսգրքի, ջրի ազգային ծրագրի և ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների, ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին օրենքները, ինչպես նաև ՀՀ կառավարության ջրային ոլորտի բարեփոխումների մասով ընդունված որոշումները, գերակա խնդիրներն ու միջոցառումները, որոնցով հաստատված են համակարգի հիմնական ծրագրային դրույթները և ուղղությունները:

2014 թվականին կոմիտեի կողմից ապահովվել է ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 777-Ն որոշմամբ հաստատված հավելվածներով ՀՀ կառավարության 2014 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների կոմիտեին վերաբերող (Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների N 1 հավելվածի 98-րդ կետ և N 2 հավելվածի 78-81-րդ կետեր) պահանջները:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են աշխատանքներ՝ համակարգում կառուցվածքային փոփոխությունների, ջրամատակարարման տևողության ավելացման ու ջրի որակի բարելավման, մասնավոր կառավարման պայմանագրերի վերահսկման, ինստիտուցիոնալ բարեփոխումների խորացման, մատակարարված ջրի դիմաց վճարների հավաքագրման մակարդակի բարձրացման, համակարգում կորուստների նվազեցման և ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման, ջրաչափական սարքերի տեղադրման և փոխարինման, բյուջետային, վարկային և դրամաշնորհային միջոցների արդյունավետ օգտագործման և նոր վարկային ու դրամաշնորհային միջոցների ներգրավման, կոյուղու մաքրման կայանների շահագործման հանձնման, ինչպես նաև այլ ուղղություններով: Տարվա ընթացքում մամուլում տեղ են գտել ոլորտին վերաբերող բազմաթիվ իրապարակումներ և իրականացվել են մամուլի ասովիսներ:

**Ջրային գործեսության ոլորտում ջրային գործեսության պետական կոմիտեի համակարգմամբ 2014 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ հիմնական աշխարհանքները.**

1. ՀՀ կառավարության 05.12.2013թ. «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների մասնավոր կառավարման շարունակությունն ապահովելու մասին» N 1366-Ա որոշման հիման վրա «Հայջրմուղկոյուղի» («ՍԱՈՒ-Ս. Ա. Ս. (SAUR S. A. S.)» կազմակերպության հետ՝ մինչև 2016 թվականի մայիսի 31-ը), «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների («Էմ Վի Վի դեկոն Ջի Էմ Բի Էյշ (MVV-decon GmbH)», «Էմ Վի Վի Էներջի Էյ Ջի (MVV Energie AG)», «Էյ-

Ի-Զի-Սերվիս», «ՍԱՈՒՐ Ս. Ա. Ս. (SAUR S. A. S.)» կոնսորցիումի հետ՝ մինչև 2016 թվականի մայիսի 31-ը) մասնավոր կառավարման շարունակականության ապահովման նպատակով երկարածզվել են ընկերությունների գործադիր մարմինների լիազորությունները մասնավոր կառավարիչներին փոխանցելու կառավարման պայմանագրեր, որոնց շրջանակներում ապահովվել է «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների արդյունավետ տնտեսական բնականոն գործունեությունը:

Զրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում պետական-մասնավոր գործընկերության հետագա զարգացման նպատակով ընդունվել են << կառավարության 14.08.2014թ. «Պետական-մասնավոր գործընկերության հետագա զարգացմանն ուղղված Հայաստանի խմելու ջրի ոլորտի բարեփոխումների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N883-Ն և «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների կողմից սպասարկվող տարածքներում պետական-մասնավոր գործընկերության ձևը և ժամկետը սահմանելու մասին» N888-Ն որոշումները:


2. Ոռոգում ջրառ իրականացնող «Սևան-Հրազդանյան-Ջրառ» և «Ախուրյան-Արաքս-Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունների, ինչպես նաև ոռոգման ջուր մատակարարող 42 ջրօգտագործողների ընկերությունների գործունեությունների արդյունքներով ապահովվել է կայուն ջրամատակարարում: Ոռոգման ոլորտում նախատեսվել է կիրառել մասնավոր կառավարման խորհրդատվական ծառայություններ, որի ներգրավման ուղղությամբ աշխատանքները և որնոր կազմակերպությունների հետ բանակցությունները սկսվել են:

3. Աբու Դարիի զարգացման հիմնադրամի և << կառավարության համաֆինանսավորման շրջանակներում Արփա-Սևան թունելի անհապաղ վերականգնողական աշխատանքների իրականացման համար 2014 թվականի ընթացքում կատարվել են՝ վտանգավոր հատվածներում նոր ժամանակավոր ամրակապերի տեղադրում՝ 186.6 տ, երեսարկի կառուցում՝ 302.5 գծմ, ցեմենտային և ստուգիչ լցամղում՝ 3871.8 քմ: Արդյունքում հնարավորություն է ստեղծվել լուծել թունելի առավել վտանգավոր հատվածների անվտանգ շահագործման հարցերը:

4. **Համակարգի կազմակերպությունների հիմնական գործունեության վերլուծությունը ցույց է դրալիս**, որ իրագործվում են հաստատված ծրագրերը՝ տալով զգալի դրական տեղաշարժեր:


Հավաքագրումների գծով 2014 թվականի համակարգի գանձումը կազմել է շուրջ 21,29 մլրդ դրամ՝ 2013 թվականի 21,17 մլրդ դրամի փոխարեն կամ ավել է գանձվել 120 մլն դրամ (գրաֆիկ 1):

Խմելու ջրի մասով գանձվել է շուրջ 17.17 մլրդ դրամ՝ 2013 թվականի 16,73 մլրդ դրամի դիմաց կամ ավել է գանձվել շուրջ 433 մլն դրամ, իսկ ոռոգման ոլորտում գանձվել է 4.12 մլրդ դրամ՝ 2013 թվականի 4.44 մլրդ դրամի դիմաց:



**Գրաֆիկ 1.** 2000-2014թթ. խմելու և ոռոգման ջուր մատակարարող կազմակերպությունների գանձման ցուցանիշների համեմատական վերլուծություն (մլն դրամ)

Խմելու ջրի ոլորտում գանձման տոկոսը 2014 թվականին կազմել է 96.63 %, իսկ ոռոգման ոլորտում գանձման տոկոսը 2014 թվականին կազմել է 81.5 %:




**Գրաֆիկ 2.** 2000-2014թթ. խմելու և ոռոգման ջուր մատակարարող կազմակերպությունների կողմից ծախսված էլեկտրաէներգիայի ծախսի վերաբերյալ (մլն կՎտ.ժամ)

Հաշվի առնելով 2014 թվականի սակավաջրության և եղանակային անբարենպաստ գործոնները՝ համակարգն ունեցել է էլեկտրաէներգիայի գերածախս: Միայն ոռոգման ոլորտում 21.6 մլն կՎտ.ժամով ավել էլեկտրաէներգիա է ծախսվել, իսկ խմելու ջրի ոլորտում ապահովվել է էլեկտրաէներգիայի խնայողություն (գրաֆիկ 2):

Խմելու ջրամատակարար կազմակերպությունների մասով ապահովվել է ջրի որակի համապատասխանությունը գործող ստանդարտներին:

5. 2014 թվականին ջրային տնտեսության համակարգի կազմակերպություններով << պետական բյուջե է փոխանցվել շուրջ 5.8 մլրդ դրամի հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ (անցած 2012-2013թթ. գումարների մեջ ներառված է նաև << կառավարության որոշմամբ գույքի առանձնացման ժամանակ հաշվարկված և վճարված ԱԱՀ-ի գումարը, ինչպես նաև հարկային պետական ծառայության կողմից «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների մասով արձանագրված և << կառավարության պահուստային ֆոնդից փոխառությունը գումարները): Արդյունքում համադրելի դաշտում համեմատություն անցկացնելու դեպքում շուրջ 150.0 մլն դրամի չափով գումարների են փոխանցվել << պետական բյուջե:


6. 2014 թվականի ընթացքում «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-Զրմուղկոյուղի», «Շիրակ-Զրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների սպասարկման տարածքներում տեղի են ունեցել ջրամատակարարման տևողության ավելացումներ՝ ապահովելով << կառավարության գերակա խնդիրներով դրված պահանջը (գրաֆիկ 3):



### Գրաֆիկ 3. 2007-2014թթ. խմելու ջուր մատակարարող կազմակերպությունների ջրամատակարարման միջին տևողության վերաբերյալ

7. 2014 թվականին Սևանա լճից օրենքով սահմանված կարգով բաց է թողնվել 269.9 մլն մ<sup>3</sup> ջուր: Սևանա լիճ է տեղափոխվել 129.8 մլն մ<sup>3</sup> ջրաքանակ: Սևանա լիճի մակարդակը 2014 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1900,13 մ:

8. Կատարվել է ջրամատակարար կազմակերպությունների միջև գույքային հարաբերությունների և պարտավորությունների ճշգրտումներ, ինչպես նաև իրականացվել են կանոնադրությամբ վերապահված այլ լիազորություններ: Շարունակվել է բարելավվել հաշվառման համակարգը: Միաժամանակ համակարգի խմելու ջուր մատակարարող կազմակերպությունների սպասարկման տարածքում բաժանորդների մոտ տեղադրված են 828374 հատ ջրաչափական սարք, որը 2013 թվականի համեմատությամբ ավել է 133260 հազարով (գրաֆիկ 4): Ջրաչափությունը կազմում է 93.0 %:



**Գրաֆիկ 4. 2006թ. իոնվարի 1-ի դրությամբ և 2006-2014թթ. խմելու ջուր մատակարարող ընկերությունների սպասարկման բաժնորդների մոտ տեղադրված ջրաչափերի վերաբերյալ**

9. 2014 թվականի ընթացքում կառուցվել, վերականգնվել և վերանորոգվել են շուրջ 1500 կմ խմելու, կոյուղու և ոռոգման խողովակաշարեր, ջրանցքներ և ջրատարներ:

10. Վերակառուցման և զարգացման եվրոպական և Եվրոպական ներդրումային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող «Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագրի» շրջանակներում Ձերմուկ և Դիլջան քաղաքներում կառուցվել են կեղտաջրերի մաքրման կայաններ:

Ջրամբարաշինության և Ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերի նախապատրաստման ուղղությամբ, այդ թվում՝ առաջնահերթ 4 ջրամբարաշինական ծրագրերի մասով (Կապս, Վեդի, Մաստարա, Եղվարդ) իրականացվել են համապատասխան աշխատանքներ, այդ թվում՝

- **Կապսի ջրամբարի մասով՝** Գերմանիայի վերակառուցման ու զարգացման բանկի (KfW) ֆինանսական աջակցության միջոցներով Կապսի ջրամբարի և ինքնահոս համակարգի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման նախնական ուսումնասիրությունը կավարտվի 2015 թվականի փետրվարին: Հաջորդ փուլով նախատեսվում է իրականացնել մանրամասն նախագծման և մրցութային փաստաթղթերի պատրաստման աշխատանքները, որի համար անցկացվելու է նոր մրցույթ, և ըստ նախնական գնահատման՝ նախատեսվում է նախագծման աշխատանքներն ավարտել 2015 թվականի դեկտեմբերի վերջին: SSC ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ 1-ին փուլով նախատեսվում է Կապսի ջրամբարի կառուցում՝ 55 մ պատվարի բարձրությամբ, 25 մլն մ<sup>3</sup> ծավալով (հետագայում 60 մլն մ<sup>3</sup> ծավալով ընդլայնման հնարավորությամբ) Կապսի ջրամբարի պատվարի և օժանդակ կառուցվածքների մանրամասն նախագծման, շինարարության և շին. տեխնիկական վերահսկողության ընդհանուր ներդրումային ծախսերը կազմում են 60,0 մլն Եվրո, այդ թվում վարկ՝ 50,0 մլն Եվրո: 2-րդ փուլով նախատեսվում է ճնշումային խողովակաշարի, ոռոգման ներտնտեսային ցանցի և նոր տեխնոլոգիաների տեղադրման մանրամասն նախագծման, շինարարության և շին. տեխնիկական վերահսկողության աշխատանքների իրականացում, որոնց ընդհանուր ներդրումային ծախսերը կազմում են 70,0 մլն

Եվրո: Նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման և շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը կկազմի շուրջ 5 տարի:

• **Վերոի ջրամբարի մասով՝ Զարգացման ֆրանսիական Գործակալության (AFD)**

ֆինանսավորմամբ ավարտվել է Վերոի ջրամբարի և ոռոգման համակարգի շինարարության համար տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունը: Վերոնշյալ ուսումնասիրություններն իրականացնող Խորհրդատուն հաջորդ փուլով, 25.11.2013 թվականին կնքված պայմանագրի համաձայն պետք է շարունակի իրականացնել ջրամբարի և ոռոգման համակարգի շինարարության համար մանրամասն նախագծման և մրցութային փաստաթղթերի պատրաստման աշխատանքները, որը նախատեսվում է ավարտել 2015 թվականի դեկտեմբերի վերջին: SSC ուսումնասիրության արդյունքների համաձայն Վերոի ջրամբարի ընդհանուր ծավալը՝ 29 մլն մ<sup>3</sup>, պատվարի բարձրությունը՝ H=72 մ, 29 մլն մ<sup>3</sup> ծավալով Վերոի ջրամբարի պատվարի և օժանդակ կառուցվածքների մանրամասն նախագծման, շինարարության և շին. տեխնիկական վերահսկողության ընդհանուր ներդրումային ծախսերը կազմում են 90,0 մլն Եվրո, այդ թվում վարկ՝ 75,0 մլն Եվրո: Ճնշումային խողովակաշարի, ոռոգման ներտնտեսային ցանցի և նոր տեխնոլոգիաների տեղադրման մանրամասն նախագծման, շինարարության և շին. տեխնիկական վերահսկողության ընդհանուր ներդրումային ծախսերը կազմում են շուրջ 30,0 մլն Եվրո, որի համար բանակցություններ են ընթանում համապատասխան դոնոր կազմակերպությունների հետ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման և շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը կկազմի շուրջ 5 տարի:

• **Եղվարդի ջրամբարի մասով՝ Եղվարդի անավարտ ջրամբարի վերակառուցման նպատակով** << կառավարության նախաձեռնությամբ և Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) ֆինանսական աջակցությամբ իրականացվում է Եղվարդի ջրամբարի հետազոտական ուսումնասիրություններ: Հետազոտական թիմը Հայաստանում ավարտել է ջրամբարի վերաբերյալ նյութերի հավաքագրման աշխատանքները: Հավաքագրված նյութերի և տեղում իրականացված ուսումնասիրությունների հիման վրա կատարվել է Եղվարդի ջրամբարի նախատեխնիկատնտեսական հիմնավորման վերջնական հաշվետվության նախագիծ: Տեխնիկատնտեսական հիմնավորման փուլն իրականացնելու վերաբերյալ որոշումը պահանջում է Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության խորհրդի և Ճապոնիայի արտաքին գործերի նախարարության կողմից հաստատման ընթացակարգ մինչև տեխնիկատնտեսական հիմնավորման փուլը սկսելը: Ծրագրի ընդհանուր արժեքը մոտավոր գնահատականներով կազմում է շուրջ 212.6 մլն ԱՄՆ դոլար: Հաստատումից հետո 2015թ. ապրիլից մինչև 2016թ. փետրվարը կիրականացվեն մանրամասն տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրություններ:

• **Մաստարայի ջրամբարի մասով՝ Ջրամբարը նախատեսվում է կառուցել 10.2 մլն մ<sup>3</sup>**

ընդհանուր ծավալով, օգտակար ծավալը՝ 8.2 մլն մ<sup>3</sup>, իսկ պատվարի բարձրությունը՝ H=30մ: Ջրամբարը կբարձրացնի 3794 հա ոռոգվող հողատարածքների ջրապահովման մակարդակը, մեխանիկական ոռոգման անցում ինքնահոս համակարգի, որի արդյունքում տարեկան կտնտեսվի 2.1

մլն. կվտ.ժ. Էլեկտրաէներգիա, ինչպես նաև լրացուցիչ կոռոգվի 590հա ներկայումս չմշակվող հողատարածքները՝ ընդհանուր կկազմի 4384 հա հողատարածքներ: Մաստարայի ջրամբարի կառուցման նպատակով բանակցություններ են ընթանում Արաբական տնտեսության զարգացման Քուվեյթի հիմնադրամի հետ: Ջրամբարի կառուցման վարկային միջոցները կազմում են շուրջ 7.0 մլն Քուվեյթի դինար, որը համարժեք է 24.6 մլն ԱՄՆ դոլար (փոխարժեքը՝ 1 դինարը=3.52 ԱՄՆ դոլար), իսկ համաֆինանսավորումը՝ 8.2 մլն ԱՄՆ դոլար, ընդհամենը՝ 32.8 մլն ԱՄՆ դոլար: Նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման և շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը կկազմի շուրջ 4 տարի:

• **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 4 և Քասախի ու Գեղարդալի ջրամբարների մասով** << կառավարության 2014 թվականի օգոստոսի 7-ի N 824 - Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 4 և Քասախի ու Գեղարդալի ջրամբարների մասով իրականացվել են համապատասխան տեխնիկատնտեսական ուսումնասիրություններ:

• Ոռոգման ոլորտում Համաշխարհային բանկի հետ իրականացվում են Էլեկտրաէներգիայի ծախսի նվազեցման միջոցով մատակարարվող ոռոգման ջրի ինքնարժեքի նվազեցմանն ուղղված համապատասխան ծրագրեր: **Մեղրու ինքնահոսի** կառուցման շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են: Միաժամանակ սկսվել են **Քաղցրաշենի, Նոյակերտի և Գեղարդալի ինքնահոսների** կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները:

11. Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրում և ընթացիկ նորոգում, կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և շահագործում, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման ծրագրերով իրականացվել են՝

ա) 156.3 կմ ընդհանուր երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման, ինչպես նաև 22.2 կմ ընդհանուր երկարությամբ դրենաժային ցանցի վերականգնման, նորոգման և մաքրման աշխատանքներ:

բ) Արարատյան հարթավայրում տեղադրված 450 դիտողական հորատանցքներում գրունտային ջրերի մշտական դիտարկումներ:

12. Մշակվել են ջրային տնտեսության ոլորտի հետագա զարգացման և կառավարման բարեփոխումների ծրագիրը, սակագնային ռազմավարությունը, ինչպես նաև կայուն ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ազգային ռազմավարությունը: Ավարտական փուլում են չհաշվառվող ջրի նվազեցման, ջրամատակարար կազմակերպությունների սպասարկման տարածքներից դուրս գտնվող բնակավայրերում ջրամատակարարման կառավարման բարելավման ուղղված ուսումնասիրությունները: Առաջին անգամ ֆինանսական միջոցներ են նախատեսվել (շուրջ 10.0 մլն Եվրոյի չափով) ջրամատակարար կազմակերպությունների սպասարկման տարածքներից դուրս գտնվող բնակավայրերում ներդրումային ծրագրեր իրականացնելու ուղղությամբ: Ոռոգման ոլորտում

Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ սկսվել է ռոռոգման ոլորտի ֆինանսական ռազմավարության մշակման աշխատանքները:

13. KfW բանկի, Եվրոմիության և Եվրոպական ներդրումային բանկի հետ սկսվել են լայնամասշտաբ ծրագրերի իրականացման աշխատանքները՝ շուրջ 73,0 մլն Եվրոյի չափով, որից 17.5 մլն Եվրոն նախատեսվել է հատկացնել դրամաշնորհի տեսքով: Արդյունավետ են ճանաչվել մի շարք վարկային ու դրամաշնորհային ծրագրեր, որոնք սահմանված կարգով դրված են ընթացակարգի մեջ, իսկ որոշների մասով տարվում են համապատասխան բանակցություններ: Եվրոպական ներդրումային բանկի, Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի և Եվրոպական հարևանության ներդրումային ծրագրի դրամաշնորհային ֆոնդի հետ համատեղ բանակցություններ է վարչում Հայաստանի Հանրապետության ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում 80.0 մլն Եվրո արժողությամբ ներդրումային ծրագրի ֆինանսավորման հարցը: Եվրասիական զարգացման բանկի հետ սկսվել է նոր ծրագիր շուրջ 40.0 մլն ԱՄՆ դոլարի չափով՝ ռոռոգման ոլորտում ներտնտեսային ցանցերը կարգի բերելու ուղղությամբ:

Զրային տնտեսության ոլորտում վերը նշված աշխատանքների իրականացման արդյունքում խմելու և ռոռոգման ջրերի մատակարարման, ինչպես նաև ջրահեռացման ոլորտներում 2014 թվականի ընթացքում ապահովվել է համակարգերի հուսալի և անվտանգ շահագործումը, բարելավվել է խմելու և ռոռոգման ջրամատակարարումը, իրականացվել է համակարգի անվտանգ շահագործումը, կրճատվել են կորուստները, ապահովվել է էներգախնայողությունը, բարելավվել է ջրի և ծառայությունների մատուցման որակը, ապահովվել է ջրամատակարարման շարունակականության ավելացումը և այլն:

2015 թվականի << գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի համակարգում կարևորվում են հետևյալ հիմնական աշխատանքների իրականացումը՝

1. << խմելու ջրի ոլորտում բարեփոխումների գործողությունների ծրագրի իրականացում՝ համաձայն << կառավարության կողմից հաստատված ժամանակացույցի: >>

2. Ռոռոգման ոլորտում մասնավոր կառավարման խորհրդատվական ծառայությունների կիրառման ապահովում, ինչպես նաև ռոռոգման ոլորտի պարտքերի վերակառուցման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

3. «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Սևան-Հրազդանյան-ջրառ», «Ախուրյան-Արաքս-ջրառ» և «Մելիորացիա» փակ բաժնետիրական ընկերությունների, ինչպես նաև ջրօգտագործողների ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ աշխատանքների իրականացում:

4. Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի, Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի, Եվրոմիության Հարևանության Ներդրումային ֆոնդի, Եվրոպական Ներդրումային Բանկի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական

զարգացման բանկի, Աբու Դաբիի Զարգացման իհմնադրամի կողմից ֆինանսավորվող վարկային ծրագրերի իրականացման ապահովում:

5. «Հայջրմուղկոյուղի», «Լողի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակոնք» փակ բաժնետիրական ընկերություններում մասնավոր կառավարիչների հետ կնքված պայմանագրերով 2015 թվականի համար նախատեսված ցուցանիշների կատարման ապահովում:

6. Խմելու ջրի կայուն, հուսալի և անվտանգ մատակարարում, որակի ապահովում, ջրի կորուստների կրճատում, ջրամատակարարման տևողության աստիճանական ավելացում, խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի վերանորոգում ու կառուցում, ջրային տնտեսության ոլորտի հետագա զարգացման ռազմավարական ծրագրերի մշակում, ինչպես նաև ջրամատակարար կազմակերպությունների կողմից չսպասարկվող բնակավայրերում ուսումնասիրությունների ավարտում և ներդրումային ծրագրերի նախապատրաստում:

7. Ոռոգման ջրանցքների, ջրատարների և պոմպակայանների վերականգնում և նորոգում, ինչպես նաև ինքնահոս համակարգերի կառուցում:

8. Ջրամբարաշինության ծրագրերի նախապատրաստում, այդ թվում առաջնահերթ Վեդու, Կապսի, Եղվարդի և Մաստարայի ջրամբարաշինական ծրագրերի իրականացման նպատակով:

9. Ջրամատակարար կազմակերպությունների սպասարկման տարածքներից դուրս գտնվող գյուղական բնակավայրերում ջրամատակարարման ներդրումային (10.0 մլն Եվրոյի չափով) աշխատանքների սկսումը և երկրորդ փուլի հետ կապված բանակցությունների վարումը:

10. Սակավաջուր տարածքներում ջրամատակարարման կազմակերպում, խորքային հորերի վերագրծարկում, ինչպես նաև եղանակային գործոններով պայմանավորված անհրաժեշտության դեպքում «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» << օրենքում փոփոխության իրականացումը՝ 170 մլն մ<sup>3</sup> տարեկան ջրառի << կառավարության իրավասությունը նվազագույնը 240 մլն մ<sup>3</sup> դարձնելու մասով:

11. Կոյուղու մաքրման կայանների (Երևանի Աէրացիայի և Արմավիրի) կառուցման աշխատանքների սկսումը և կոյուղացանցերի կառուցումը:

12. Ջրամատակարար կազմակերպությունների սպասարկման տարածքներից դուրս գտնվող գյուղական բնակավայրերում ջրամատակարարման կառավարման բարելավման և կառուցվածքային բարեփոխումներին ուղղված ուսումնասիրությունների, չհաշվառվող ջրի նվազեցման, ինչպես նաև ոռոգման ոլորտի ֆինանսական ռազմավարությունների մշակման աշխատանքների իրականացումը:

**<< գյուղատնտեսության նախարարության  
ջրային տնտեսության պետական կոմիտե**